ԱՐԺԵՎՈՐԻՐ ԿՅԱՆՔԴ

1- ժամանակ հատկացրու կարեկցությանը

«Եվ ահա երկու կույր այն ճանապարհի վրա նստած էին. երբոր լսացին՝ թե Հիսուսն է անց կենում, աղաղակեցին և ասեցին, Ողորմիր մեզ, Տեր՝ Դավիթի Որդի: Իսկ ամբոխը հանդիմանեց նրանց՝ որ լռեն, բայց նրանք էլ առավել էին աղաղակում և ասում. Ողորմիր մեզ, Տեր Դավիթի Որդի: Եվ Հիսուսը կանգնեց՝ կանչեց նրանց և ասեց. Ի՞նչ էք ուզում որ անեմ ձեզ: Նրան ասեցին. Տեր, որ մեր աչքերը բացվեն: Հիսուսն էլ գթաց՝ նրանց աչքերին դիպավ, և շուտով տեսան նրանց աչքերը, և նրանք գնացին նրա ետևից:» Մատթեոս 20:30-34

«Տեր, տուր ինձ քո աչքերը և ինձ ցույց տուր ում ծառայել:»

2- Ժամանակ հատկացրու տոնելուն

«Եվ երբոր նա արդեն մոտեցավ Ձիթենյաց սարի զառիվայրին, աշակերտների բոլոր բազմությունն ուրախությունով սկսեց օրհնել Աստծուն բարձր ձայնով՝ այն բոլոր զորությունների համար որ տեսել էին: Եվ ասում էին. Օրհնյալ է Տիրոջը անունովն եկող թագավորը. խաղաղություն լինի երկնքումը և փառք բարձունքներումը: Եվ Փարիսեցիներից ոմանք ժողովրդի միջիցը նրան ասեցին. Վարդապետ, հանդիմանիր աշակերտներիդ: Եվ նա պատասխանեց և ասեց՝ Ասում եմ ձեզ՝ որ եթե սրանք լռեն, քարերն են աղաղակելու:» Ղուկաս 19:37-4

«Տեր, օգնիր հասկանամ որ ինչ ես արել ինձ համար:»

3- Ժամանակ հատկացրու գնահատելու

«Եվ երբոր Հիսուսը Բեթանիա էր՝ Սիմոն բորոտի տանը, Նրա մոտ մի կին եկավ, որ մի շիշ ծանրագին յուղ ուներ, և նրա գլխի վրա թափեց, երբոր նա սեղան նստած էր: Նրա աշակերտներն էլ տեսնելով նեղացան և ասեցին. Ինչո՞ւ եղավ այդ կորուստը. Որովհետև կարող էր այդ յուղը շատի ծախվել և աղքատներին տրվել: Հիսուսն էլ իմանալով ասեց նրանց. Ինչո՞ւ էք այդ կնոջը նեղություն տալիս, որ դա մի բարի բան գործեց ինձ վրա: Որովհետև աղքատներն ամեն ժամանակ ունեք ձեզ հետ. բայց ինձ միշտ ձեզ հետ չունեք: Դա այդ յուղն իմ մարմնի վրա թափելով, իմ թաղվելու մասին արավ: Բայց ճշմարիտ ասում եմ ձեզ, ուր որ էլ բոլոր աշխարհքի մեջ այս ավետարանը քարոզվի, կխոսվի նա էլ, որ դա արավ՝ դրա հիշատակի համար:» Մատթեոս 26:6-13

«Տեր, ցույց տուր ինձ այն ինչ, որ արժեքավոր է քեզ համար:»

4- Ժամանակ հատկացրու հոգեկան կապվածության

«Եվ դուրս ելավ իր սովորության պես գնաց Ձիթենեաց սարը, և աշակերտներն էլ նրա ետևից գնացին: Եվ երբոր այն տեղը հասավ, նրանց ասեց. Աղոթք արեք, որ փորձության մեջ չմտնեք: Եվ ինքը նրանցից հեռացավ մի քարընկեցի չափ, ծունր դրավ, աղոթք էր անում:» Ղուկաս 22:39-41

«Տեր, օգնիր ինձ, որ քեզ հետ կապի մեջ լինեմ ամբողջ օրվա ընթացքում:»

5- Ժամանակ հատկացրու հաշտությանը

«Երբոր նրա հետ լինողները տեսան, թե ինչ է լինելու, նրան ասեցին. Տեր, սրով զարկե՞նք: Եվ նրանցից մեկը քահանայապետի ծառային զարկեց, և նրա աջ ականջը կտրեց: Հիսուսն էլ պատասխանեց և ասեց. Թող տվեք մինչ այս. և նրա ականջին դպավ և բժշկեց նրան:» Մատթեոս 22:49-51

«Տեր, տուր ինձ զորություն, որ սիրեմ նրանց, ովքեր հաճելի չեն:»

«Եվ գոհություն տաք Հորը որ մեզ արժանացրեց մասնակից լինելու սուրբերի վիճակին լույսումը. Որ փրկեց մեզ խավարի իշխանությունիցը, և փոխադրեց մեզ իր սիրելի Որդու արքայության մեջ, Որի ձեռովն ունենք փրկություն նրա արյունովը՝ մեղքերի թողությունը:» Կողոսացիս 1:12-14

Հաջորդ Քարոզի Թեման: Հովիվ Սարօ Խաչիկեան

ԱՅՍ ԶԱՏԻԿԻՆ ՃԱՇԱԿԻՐ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ